Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն

|Հայերեն |Հայերեն դաս. |English |Русский |Español|

- Նախարարություն
  - Նախարարության կառավարում
    - Նախարար
    - Նախարարի տեղակալներ
      - Սերժիկ Սրապիոնյան
      - 
    - Խորհրդականներ
      - Ստեփան Պետրոսյան
      - Ռուզաննա Վիրաբյան
      - Խորհրդականներ Սփյուռքում
    - Օգնականներ
      - Արույակ Ներսեսյան
    - Մամուլի քարտուղար
  - Նախարարության աշխատակազմ
    - Աշխատակազմի ղեկավար
    - Աշխատակազմի ղեկավարի տեղակալ
    - Վարչություններ
    - Բաժիններ
  - Նախարարության կառուցվածքի գծապատկեր
- Նախարարության ծրագրեր
  - 2014թ. ծրագրեր
  - 2013թ. ծրագրեր
  - 2012թ. ծրագրեր
  - 2011թ ծրագրեր
  - 2010թ. ծրագրեր
  - 2009թ. ծրագրեր
- Իրավական ակտեր
  - ՀՀ Սահմանադրություն
  - ՀՀ օրենքներ
  - ՀՀ Նախագահի հրամանագրեր, կարգադրություններ
  - ՀՀ կառավարության որոշումներ
  - ՀՀ վարչապետի որոշումներ
  - Նախարարի հրամաններ
  - Պայմանագրեր, հուշագրեր
  - Նախագծեր
  - Այլ փաստաթղթեր
- Հաշվետվություններ
  - 2014թ.
  - 2013թ.
  - 2012թ.
  - 2011թ.
  - 2010թ.
  - 2009թ.
  - 2008թ.
- Հայտարարություններ, գնումներ
  - Հայտարարություններ
  - Գնումներ
- Նորություններ
- Ելույթներ
- Հարցազրույցներ
- Այցելություններ
- 

Նորություններ

# Նորություններ

2014-10-31 | Նորություններ

Դոնի Ռոստովի մարզի հայաբնակ Չալթըր գյուղի «Անի» համույթի անդամներն այցելեցին ՀՀ սփյուռքի նախարարություն



Հոկտեմբերի 31-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց ՌԴ Դոնի Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չալթըր գյուղի «Անի» ազգագրական համույթին՝ շրջանի ղեկավար Արշակ Պորկշեյանի գլխավորությամբ և ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի ուղեկցությամբ:

Դոնի հայերի «Անի» համույթը, որը 1985թ. հիմնադրել է Ռոստովի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Գրիգոր Խուրդայանը, համառուսական և միջազգային բազմաթիվ մրցույթների դափնեկիր է: Ներկայումս համույթն ունի շուրջ 40 երաժիշտ և երգիչ, ովքեր նվագում են հայկական ազգային գործիքներ՝ թառ, քամանչա, քանոն, ուդ, զուռնա, դհոլ և այլն: Նրանց երգացանկում ընդգրկված են ինչպես ժողովրդական երգեր, այնպես էլ հայ ժամանակակից ու դասական կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համույթը համերգներով բազմիցս հանդես է եկել Կանադայում և եվրոպական մի շարք այլ երկրներում:

ՀՀ սփյուռքի նախարարը բարձր գնահատեց համույթի հայապահպան գործունեությունը ոչ միայն Դոնի Ռոստովի մարզում, այլև ողջ Ռուսաստանում և այն բոլոր երկրների հայ համայնքներում, որտեղ ելույթներով հանդես է եկել խումբը:

«25-ամյա դադարից հետո՝ այս տարվա հոկտեմբերի 29-ին, դուք առաջին անգամ ելույթ ունեցաք Հայրենիքում՝ Երևանի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, իսկ այնուհետև՝ Արտաշատում: Ուրախ եմ, որ «Անի»-ի կատարումները հնարավորություն կունենան վայելել նաև իջևանցիները, - նշեց ՀՀ սփյուռքի նախարարը՝ հավելելով, - ողջունելի է ԵՊՀ ռեկտորի նախաձեռնությունը՝ «Անի» համույթի համերգները Հայրենիքում իրականություն դարձնելու գործում: Կարծում եմ, այլ ուսումնական հաստատությունների համար Մայր բուհի նախաձեռնությունը պետք է օրինակ դառնա»:

Նախարար Հրանուշ Հակոբյանը համույթի անդամներին հորդորեց փորձերի ժամանակ հաղորդակցվել միայն հայերենով, ինչը մեծապես կօգնի մայրենիի իմացության խորացմանն ու պահպանմանը: Գերատեսչության ղեկավարը խմբի անդամներին հրավիրեց մասնակցելու 2015թ. «Սփյուռք» ամառային դպրոցի՝ ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացներին: «2015թ. աշնանը՝ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին, նախարարությունը կանցկացնի նաև «Կոմիտաս» փառատոնը: Սիրով հրավիրում եմ ձեզ՝ հանդես գալու կոմիտասյան կատարումներով», - նշեց ՀՀ սփյուռքի նախարարը և խմբի անդամներին հանձնեց Հայոց Ցեղասպանության խորհրդանիշ հանդիսացող «Անմոռուկ» կրծքանշաններ:

Գերատեսչության ղեկավարն ուրախությամբ արձանագրեց, որ Չալթըրի հայ համայնքի պատանիներն ու աղջիկներն ակտիվ մասնակցում են հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրին: Նա համայնքի մասնակիցներին տրամադրեց խտասալիկներ, կոչ արեց դիտել «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի մասին պատմող ֆիլմերը և 2 տարի անց անպայման մասնակցել փառատոնին:

Նախարարը մեծապես կարևորեց հիմնականում հայերով բնակեցված Չալթըր գյուղի և Դոնի Ռոստովի մարզի հայ համայնքի պատմության ամբողջացումը մեկ գրքով:

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը նշեց, որ մինչև 1917թ. համայնքի պատմությունն արձանագրվել է, իսկ այժմ աշխատանքներ են տարվում 1917-2013թթ. ընկած ժամանակաշրջանն ամբողջացնելու ուղղությամբ:

Բարձր գնահատելով հայ ազգային երաժշտության պահպանման և զարգացման գործում «Անի» համույթի գործունեությունը, ինչպես նաև տևական դադարից հետո Հայրենիքում համերգային ծրագրով հանդես գալու նախաձեռնությունը՝ նախարար Հրանուշ Հակոբյանը խմբին պարգևատրեց ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրով:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և իրենց աշխատանքն արժևորելու համար՝ Մյասնիկյանի շրջանի ղեկավար Արշակ Պորկշեյանը նշեց, որ ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ են այսօր գործում Չալթըրի հայկական դպրոցները: Նա հավելեց, որ համայնքում հետաքրքրությամբ են ծանոթացել նաև Երվանդ Զորյանի ղեկավարած Հայկական վիրտուալ քոլեջի հնարավորություններին:

Մյասնիկյանի շրջանի ղեկավարը հավաստիացրեց, որ համայնքում պահպանվում են հայկական ավանդույթները, նիստուկացը: Չալթըրցի հայերը միմյանց հետ հաղորդակցվում են պատմական Անիի իրենց խոսվածքին բնորոշ հայերենով և այցելում գյուղի հրապարակի ծայրում կառուցված Հայ Առաքելական եկեղեցին:

Արշակ Պորկշեյանը ՀՀ սփյուռքի նախարարին նվիրեց չալթըրցի հայերի համար խորհրդանիշ դարձած հուշանվերներ, ինչպես նաև Չալթըրի հրապարակը և հայկական եկեղեցին պատկերող մի կտավ:

Հանդիպման ավարտին խմբի մենակատարներ Արինա Բաբիյանը և Սարգիս Հակոբյանը կատարեցին հատված «Անուշ» օպերայից և բանահյուսական երգարվեստից մի քանի նմուշներ:

Նախարարին կից ատյան
- Ատյանի անդամներ
- Ատյանի 2014թ. նիստեր
- Ատյանի 2013թ. նիստեր
- Ատյանի 2012թ. նիստեր
- Ատյանի 2011թ. նիստեր
- Ատյանի 2010թ. նիստեր
- Ատյանի 2009թ. նիստեր

- Կադրային ապահովում
- Նախարարության պարգևներ
- Համաժողովներ
- Տեսաժողովներ
  - 2014թ.
  - 2013թ.
  - 2012թ.
  - 2011թ.
  - 2010թ.
  - 2009թ.
  - 2008թ.
- Հրատարակումներ
- Տեսադարան
  - Տեղեկատվական հոլովակներ
  - Նախարարի տեսաօրագիր
  - Լուսանկարներ
  - Հայլուր Սփյուռք
  - Սփյուռքի ժամ
  - Մերոնք
  - Արի Տուն
  - Այցելություններ
  - Հեռուստահաղորդաշարեր
  - Մամլո ասուլիսներ
  - Համաժողովներ
  - Այլ միջոցառումներ
- «Հայերն այսօր» պարբերական
- Էլեկտրոնային գրադարան
- Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարան
- Համահայկական ընկերակցություններ
  - Լրատվամիջոցների համահայկական ընկերակցություն
  - Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցություն
- «Արի տուն» ծրագիր
- «Իմ Հայաստան» փառատոն
- Արցախն այսօր
- Երկքաղաքացիություն
- Օգնություն աշխատանք փնտրողին
- Ներդրում Հայաստանում
- Օգտակար հղումներ
- Հաճախ տրվող հարցեր
- Տեղեկատվության տրամադրում
- Կապը մեզ հետ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ

Լուրերը Ձեր ընտրած տարբերակով կուղարկվեն նշված էլեկտրոնային հասցեին:

ՆԱՄԱԿ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Առցանց նամակագրության համակարգ

Թարգմանիչ

Կցված նկարներ՝






<- Ետ

ISMA
Online
Translation

Օրենսդրության

## Սպասվող իրադարձություններ

<< 2014 >> << Նոյեմբեր >>

| Երկ | Երք | Չրք | Հնգ | Ուրբ | Շբթ | Կրկ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1 | 2 |
| 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |

## Շնորհավորանքներ

05.11.2014 | Շնորհավորանքներ

Սրբազա՛ն Հայր,

Իմ ջերմ ողջույններն ու շնորհավորանքներն եմ հղում Ձեզ՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ ընտրվելու առթիվ: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին Ձեր ընտրությունը

Նախորդը Հաջորդը

## Ելույթներ

08.10.2014 | Ելույթներ

Սեպտեմբերի 9-ին, «Անի» պլազայի Անի սրահում Հայ կրթական հիմնարկության նախաձեռնությամբ տեղի ունեցավ հայ բարերարների հանդիպումը, իրենց աջակցությամբ Հայաստանի բուհերում սովորող, ուսանողների հետ: Հանդիպմանը մասնակցում էր ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայ կրթական հիմնարկության խորհրդի նախագահ Ալ Գաբալոֆը կնոջ Դայանայի հետ, 2013թ. նախագահ Հերմինե Պախաանյանը

Նախորդը Հաջորդը

## Տեղեկատվական անկյուն

Հպարտ եմ, որ հայ եմ



Հայկական կազմակերպություն



Հայեր



Սովորենք հայերեն



## Մեր գործընկերները

www.sci.am
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հայաստանի Գրողների Միություն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

© 2009-2012 Բոլոր իրավունքները պաշտպանված են
ՀՀ սփյուռքի նախարարություն
ՀՀ, ք. Երեւան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1
Հեռ.՝ (374/10) 58-56-01, 58-56-02
Fax: (374/10) 58-91-57
Email: info@mindiaspora.am
WEBSITE by Broncoway
webmaster@mindiaspora.am